

ՌԵԺԻՄՆ ԻՍԿԱՊԵՍ ՈՒՉՈՒՄ Է ԽԵՂԴԵԼ ԳԱԼԱ ՅԵՌՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ. ՉԻ ՍՏԱՅԿԻ

« ... Յետքերը տանում են Դավալու ... » Ռ.Ք.

Գյումրիում երկու տարուց ավելի է հեռարձակող ԳԱԼԱ (Գյումրու անկախ լրատվական ալիք) հեռուստաընկերությունը իր գործունեության 2 տարիների ընթացքում գրեթե մշտապես ունեցել է 4 լրատվական-վերլուծական հաղորդաշար. օրական 3 անգամ լրատվական թողարկումներ, շաբաթը 3 անգամ հավելված՝ հարցազրույցի ժանրում՝ 1+1 ֆորմատով, շաբաթը մեկ անգամ բանավեճ 1+1+1 ձևաչափով՝ լրագրողի եւ 2 ընդդիմախոսի մասնակցությամբ, որոշ անկանոնությամբ՝ շաբաթական 1 անգամ՝ բազմամարդ (7-25 հոգի) հեռուստաբանավեճ, բոլորն էլ ուղիղ եթերում: Բացի այդ, հեռուստաընկերությունն իր ծրագրերում ունի մամուլի տեսություն, արխիվի արժանահիշատակ նյութերին մշտական անդրադարձներ: Ժամանցային, զվարճալի եւ մանկական հաղորդաշարերը չեն թվարկում, որովհետեւ ԳԱԼԱ խեղդելու խնդրում դրանք կարելու էին: Հիշյալ լրատվական-վերլուծական հաղորդաշարերի հյուրեր են եղել ամենատարբեր գաղափարների, քաղաքական կողմնորոշումների, դիրքորոշումների տեր մարդիկ. առավազն 20 կուսակցությունների ներկայացուցիչներ, ավելի քան 50 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մարզպետարանի եւ քաղաքապետարանի պաշտոնյաներ, ավագանու անդամներ, մշակույթի գործիչներ, մտավորականներ եւ այլն: Այդ հաղորդաշարերում արժարժվել ու բուռն կերպով քննարկվել են տեղի ունեցող բոլոր իրադարձությունները, հասարակական, քաղաքական, մշակութային, սոցիալական զարգացումները, այդ ամենը տեղի է ունեցել ուղիղ եթերում եւ ուղեկցվել հեռուստադիտողների հարցերով ու արձագանքներով: Ես, ոլորտի մասնագետս, լինելով Գյումրի քաղաքում նաեւ մյուս բոլոր հեռարձակողների ու լրագրողների գործընկերը, բարձր եմ գնահատում սկսնակ հեռուստաընկերության նման ակտիվությունը: Կարծում եմ, որ գույքային եւ տեխնիկական պակասությունները, եւ, երբեմն, մասնագիտական որոշ թերությունները էական վնաս չեն տվել վերոհիշյալ հաղորդաշարերի նշանակությանն ու ազդեցիկությանը. այդպես է՝ երբ խոսքը բովանդակության մասին է, եւ ոչ թե՝ ձեւի: Քաղաքում էլ մարդիկ նկատել են կարծիքների այն բազմազանությունը, որ երեւում է ԳԱԼԱ ՅԸ եթերում: Իշխանությունների բոլոր թեւերի հասցեին որակյալ եւ հիմնավոր քննադատության պակաս էլ չի եղել: Քննադատվողների դժգոհության պակաս՝ նույնպես: Կարծում եմ այսպես էլ պիտի լիներ:

Ես էլ, ԳԱԼԱ ՅԸ հիմնադիրն էլ, մյուս հեռարձակողներն էլ, մասնավաճ այս ոլորտում 10-20 տարվա փորձով մարդիկ, գիտեինք (ու գիտենք) հայաստանյան մասնավոր հեռուստահեռարձակման պատմությունն էլ, Ա1-ի, Ա1+-ի ու Նոյյան Տապանի պատմություններն էլ, համապատասխան օրենքներն էլ, Ամալյանին՝ Գրիգոր, Շամիրամին՝ Աղաբեկյան եւ մյուսներին, նրանց արածն էլ, չարածն էլ, Բաղդամյան 26-ի, Տ.Նաղդալյանի ու Ա.Յարությունյանի հետաքրքրություններն այս ոլորտում, եւ այն, որ ազգային անվտանգության նախկին ու ներկա համակարգերը ՉԼՄ կոնֆլիկտների ժամանակ շարունակում են պաշտպանել իշխանություններից մի քանի հոգու եւ ոչ թե մեր երկրի ազգային անվտանգությունը: Հարկայինի ժրաջանները եւ ժրաջանների ջանադիրները պաշտոններ ստանալու համար եթե առաջ կաշառքներով էին առաջ գնում, հիմա բյուջե լցնելու առասպելական պլաններ են խոստանում եւ փոքր ու միջին գործարարի ջանից կաշի են հանում, պետք եղած ժամանակ էլ՝ ամենաբութ գործիքը դառնում նրանց դեմ՝ ով դուր չի գալիս ռեժիմ(ներ)ին: Գիտեինք նաեւ, որ լուսի մարդը կարող է հեռուստաընկերության կամ ռադիոյի լույսն անջատել տալ, պետական աշտարակների մարդիկ աշտարակների վարձակալման վարձը թանկացնել՝ երբ կամենան, հրշեջները կարող էին գալ ու իրենցը տանել, եւ այլն: Գիտեինք նաեւ, թե՛ որ քաղաքում որ հեռարձակողի որ նկարահանող խմբին ինչ բռնությունների են ենթարկել այսինչ ոստիկանության աշխատակիցները, ասենք՝ ոստիկանության շենքը փողոցից նկարահանելու համար, որտեղ՝ որ հեռուստաընկերության հիմնական մալուխը (կաբելը) կարող էին կտրել եւ ինչու, գիտեինք ու գիտենք նաեւ, որ այս մարդիկ գիշերներ էին լուսացնում, մտածելով, թե՛ իրենց տանջանքով ստեղծած հեռուստաընկերություններին կամ ռադիոհեռուստաընկերություններին տեսնես ինչ վնաս են տալու մինչեւ առավոտ՝ Եսինչ ռեպորտաժից կամ հարցազրույցից հետո:

Ուրիշ երկրների այս ոլորտի պատմությունից գիտեինք, որ այս գործը միայն փող աշխատել չէ, ու միայն հանրությանը բարեխիղճ լրատվություն-վերլուծություն տալ չէ, դրանք երկուսն էլ հավասարապես կարելու են, փոխլրացնող, փոխշաղկկապված, ու եթե մեկը հզորանում է, պիտի մյուսին քաշի վեր հանի իր ետեւից, եւ այդպես շարունակ, մեկի գերակայությունը ճգմում է մյուսին ու վերջում մուտանտի վերածում ՉԼՄ-ն, այն դարձնում է կամ փող տպող բիզնես մեքենա, կամ մեկի մեզաֆոնը կամ դիկտաֆոնը, կամ Փի Ար սարքավորումը, կամ էլ դրանք՝ մեկտեղ: Գիտեինք

ու գիտենք նաեւ, որ մեր բոլոր մասնավոր հեռարձակողները պարբերաբար (քաղաքական սրացումների, ընտրությունների, հանրահավաքների եւ իշխանության երկարակեցությանը վտանգող իրադարձությունների ժամանակ) կանգնում էին երկընտրանքի առաջ. բիզնէսը (իբր՝ փող աշխատելը), թե՞ ճշմարտությունը (զանգվածային բարեխիղճ՝ հնարավորինս օբյեկտիվ, ճշմարիտ, լուր տալը), ու ճնշող մեծամասնությանը ընտրում էին առաջինը՝ «... մի քիչ լուռ մասնք, պրոֆիլակտիկ աշխատանքների համար հաղորդակն անջատենք, մի հատ գիլ կին ղենք՝ մարդիկ նայեն, մինչեւ տեսնենք՝ ինչ է լինում, մինչեւ լավ ժամանակներ գան»։ Այսպես, հասարակական զարգացումների ակտիվ մասնակցի իրենց դերից մասամբ կամավոր, մասամբ վախեցնիչներից ազդված՝ վերածվեցին միջին թվաբանական մարգինալի։ Նրանց բարոյական կեղծ արդարացումը հետեւյալն էր ու է, թե հեռուստատեսությանը որ մի բան պատահի, գան փակեն՝ ասենք, հեռուստատեսության արժեքը տասնապատիկ գերազանցող տուգանք որ գրեն, եղ ո՞ր մի հեռուստադիտողն է իրենց թիկունքում կանգնելու, ո՞վ է իրենց դարձրել հոգալու... անսխալ ինքնապաշտպանություն է, իհարկե, ոչ մի հեռուստադիտող էլ չի կանգնելու իրենց թիկունքին։ Տարբեր պատճառներով։ Ու այդ պատճառներն էլ գիտենք։

Գիտենք նաեւ, թե անցած 15 տարում քանի տասնյակ միլիոն դոլարի դասընթացով, տեխնիկասարքավորումներով, փորձի փոխանակման այցելություններով, աշխատավարձերով ու գույքով են սնուցվել Հայաստանի մասնավոր (ու պետական) հեռուստաընկերությունները, որ... ազատ խոսք ունենանք, որ հանրության մեջ շրջանառվող ԲՈԼՈՐ գաղափարները ազատորեն հաղորդվեն հանրությանը ՉԼՍ-ների միջոցով, որ փաստերը չխառնվեն մեկնաբանություններին, որ մարդիկ են գլխից իմանան լրագրողի խոսքը միայն փա՛ստ է, թե՞ միայն մեկնաբանություն, կամ՝ ջոկեն հեշտությամբ՝ ո՞րն է փաստը, որը՝ մեկնաբանությունը։ Ժամանակի ընթացքում երեւանյան հեռուստաընկերությունները, որոշ անկայուն բացառություններով, կողմնորոշվեցին դեպի պայմանական գործարարությունն ու են մնացածը համարեցին երկրորդական եւ առաջինին ենթակա, որովհետեւ սեփականությունը կորցնելու ակնհայտ ռիսկ տեսան, վտանգ տեսան իշխանություններից, ապա որոշեցին խորամանկել ու ցույց տալ, թե «ճիշտ են էլի ես իշխանությունները, եղ ընդդիմությունը որ էկավ, ինչ է անելու, իբր», ու սկսեցին հանուն հեռուստադիտող խաբելու ընդարձակել իրենց լրատվական թողարկումների տեղողությունը, վազող տողեր լցնել դրանց մեջ, համակարգչային գրաֆիկայով խեղդել իրենց տված վակուումը, ավելի ուշ՝ իրենց մերձլրատվական եւ կեղծլրատվական թողարկումներն էլ ֆինանսական բեռ դարձան ու դրանք էլ նվազեցրին։ Այս գործարարությունը կոչեցի պայմանական, որովհետեւ իրական գործարարություն չէ այն գործարարությունը, որում հաջողելու համար պիտի հարմար լինել իշխանություններին, հարկայինին, մաքսայինին, ուժայինին ... տարբեր ձեւերով։

Գիտենք նաեւ ու գիտենք, որ իշխանությունները առաջ էլ, հիմա էլ ազնիվ չեն. հրապարակավ խոսում են ժողովրդավարությունից ու ազատություններից, տակից՝ ամեն հնարավոր բան անում այդ ազատությունները սահմանափակելու համար այնքան, որքան որ դրանք չեն վնասի իրենց պաշտոնական երկարակեցությանը։ Ահա սա է իրենց վարդապետությունը։ Եւ խոսքի ու մյուս ազատությունների դեմ ճնշումներն այնքան են սուր, որքան անօրեն են իշխանությունները, ու հակառակը՝ որքան իր վարքում օրինական է իշխանությունը, այնքան չի վախենում քննադատությունից ու ազատ խոսքից։ Իշխանության երկարակեցությանը կանխատեսվող բոլոր սպառնալիքներին իշխանությունը դատապարտված է հակահարված տալ։ Կարելու հարց է, թե ովքեր են գնահատում այդ սպառնալիքը։ Հասկանալի է, որ սպառնալիքների գերազնահատման հնարավորությունը ուղիղ համեմատական է գնահատողների կոռումպացվածության մակարդակին. **կոռումպացված** (ընտրակեղծիքների որոշակի ազդեցիկ պաշարով իշխանության եկած կամ մնացած, պետական կոռուպցիայի գանազան դրսեւորումներով ծանրաբեռնված, պետության զավթման կոռուպցիայով կաշկանդված), **իշխանությունների սարսափը ազատ խոսքից** (մամուլի ազատություն, արտահայտման ազատություն, կարծիքի ազատություն, հանրահավաքների, երթերի, ժողովների ազատությունը եւ հարակից ազատությունները) **դարձել է իշխանությունների հատկանիշ**։ Սա հավակնում է բանաձեւի վերածվել. Երբ ԳԱԼԱ հեռուստաընկերությունն իր լուրերում սեպտեմբերի 21-ի երեկոյան եթեր հեռարձակեց LSՊ սեպտեմբերի 21-ի ելույթի մասին 5 րոպեանոց ռեպորտաժ եւ 6 րոպեանոց ռեպորտաժ՝ սեպտեմբերի 22-ին վերլուծական ծրագրում, ոչ ոք, որեւէ գերատեսչությունից չանհանգստացրեց ԳԱԼԱ ՀԸ որեւէ աշխատակցի կամ՝ հիմնադրին, երեւի վտանգավոր չգնահատեցին, իսկ երբ հոկտեմբերի 14-ին դեռ հիշյալ ելույթը չհեռարձակած, եթեր գնաց ծանուցում այն մասին, որ ցուցադրվելու է այդ ելույթը՝ կարծես Ալ Զախոյի պոչն էին գտել Գյումրիում. սկսեցին զանգել, պահանջել, հետո՝ խնդրել, հետո սպառնալ՝ եթեր չտալ այդ ելույթը։ Ինչու՞։ Դե որովհետեւ սեպտեմբերի 22-ի եւ հոկտեմբերի 14-ի արանքում Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդիպել ու զրույցներ էր ունեցել ՀՀՊ ղեկավարների ու Վազգեն Մանուկյանի հետ, եւ հոկտեմբերի 26-ին հանրահավաք էր նշանակել, ու իշխանությունը սա գնահատել էր որպես ահազանցող սպառնալիք, գերազնահատել էր սպառնալիքը, ապա՝ մի հանճարեղ եզրակացության էր եկել. մամուլի ակումբների բանավեճերը հեռուստաեթերում չլուսաբանել, հեռուստաեթերը իսպառ ազատել LSՊ-ից, նրա համակիրներից։ ՉԼՍ ոլորտի մասնագետների զարմանքը ահռելի էր. - Այդքան տգե՛տ են,

ուրեմն:- Սա՝ այդ տարակուսանքի ընդհանրացած ձեւակերպումն էր: Տարակուսանքը ոչ թե հոսքի ազատության սահմանափակմանն էր վերաբերվում (այս հեծանիվը վաղուց էր հայտնագործվել), այլ նրան, որ ռեժիմը կարող է այնքան տգետ լինել, կարծելու համար, թե այդպիսով մոռացության կտա իր հավանական ախտյանին, որ մարդիկ այդպես էլ չեն իմանա հոկտեմբերի 26-ի հանրահավաքի մասին, էլ չեմ խոսում՝ հակադարձ ազդեցության մասին: Պարզվեց, իշխանություն կորցնելու վախը (ոչ թե իշխանություն պահելու ցանկությունը) ավելի զորավոր է, քան չկորցնելու մեթոդների միջեւ խտրականություն չղնելը:

Երբ 6 տարի առաջ ինձ այցելեց Վահան Խաչատրյանը եւ ծանոթացանք, ասաց, թե ուզում է հեռուստաընկերություն հիմնել, ես անկեղծորեն խորհուրդ տվեցի այդ գումարը ծախսել ռեստորանի բիզնեսում, բացատրեցի, որ բավականաչափ ռիսկային գործ է, եւ եթե ազատ լրատվական քաղաքականություն է վարելու՝ իշխանությունները շարունակ թունավորելու են այդ հեռուստաընկերության կյանքը: Դա Ա1+-ի եւ Նոյյան Տապանի եթերազրկումից 5 ամիս առաջ էր, ես բավարար հիմքեր ունեի նման խորհրդատվության համար: Չնայած դրան, Վահանը պնդեց իր մտադրությունը ու ես մի քանի հանդիպումներում ներկայացրի համապատասխան օրենսդրությունը (ՀՀ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքը մեկ տարեկան էր), դրանում ամկա թակարդները (որոնք քննադատել ենք դեռ նախագիծ եղած ժամանակներից ու քննադատում ենք՝ դեռ ապարդյուն), ՀՀ-ը կառուցվածքը, դրա անդամների նշանակման օրինական եւ ստվերային՝ ինձ հայտնի պարագաները եւ այն ամենը, ինչ կարող էր օգտակար լինել նրան, մասնավորաբար ՀՀ երրորդ հանրապետության 10 տարիների ընթացքում ՉԼՄ-ների եւ լրագրողների նկատմամբ կիրառված բռնություններն ու ճնշումները, հեռուստառադիոարդյունաբերության սպառնալիքները, Կապի նախարարության, Էլեկտրակապի պետության, ՀՀ-ը, նախագահականի, հարկայինի ու Էլի հնարավոր մյուս աստիճանների հետ հնարավոր զարգացումները:

Մարդը մնաց իր դիրքորոշմանն ու նախ հեռուստատեսային հաղորդումների ու ֆիլմերի արտադրական ստուդիա ստեղծեց, հաղորդաշարերը սկսեց ցուցադրել Պրոմեթեւս (h2) ալիքով, ապա՝ 2005 թվին մասնակցեց հաճախականության համար հայտարարված մրցույթին ու արտոնագիր ստացավ, որքան ինձ է հայտնի՝ առանց կաշառքի, թյուրիմացաբար (ռեժիմը մինչեւ հիմա գլխի չի ընկնում թե իր համակարգից ո՞վ կարող էր պատասխանատվություն ստանձնած լինել ԳԼԼԱ ՀԸ-ի լոյալության համար, որ բռնի՝ ականջները կտրի ...): ԳԼԼԱ ՀԸ-ն Գյումրու 33-րդ հեռուստաալիքով հեռարձակում է իր հեռուստահաղորդումները՝ սկսած 2005 թվի հուլիսից: Անցած տարիներին հետեւում էի հաղորդումներին եւ ուրախանում հաջողությունների ու մանավանդ՝ բազմակարծության համար: Կռահում էի նաեւ, որ բազմակարծության համար իմ ուրախությունը ուղիղ համեմատական է հեռուստաընկերության գլխին կուտակվող սպառնալիքներին (Նյուտոնի երրորդ օրենքը լուսավոր բանաձեւ է): հարցազրույցների երեւանյան բազմաթիվ հյուրեր նշում էին, թե Երեւանում իրենք նման հնարվորություն չունեն՝ ուղիղ եթերում հարցազրույց տալ, խոսել կոռուպցիայից, մարդու իրավունքների ոտնահարումների խայտառակ դեպքերից, խոսքի ազատության նկատմամբ այլանդակ ճնշումներից եւ այլն: Անցած տարիներին Վահան Խաչատրյանի հետ հանդիպում էինք ամսական հազիվ 1 անգամ, ամեն անգամ հարցնում էի կեսկատակ-կեսլուրջ՝ չհոգնեցրի՞ն դեռ քեզ: Տեղյակ էի, որ մի շարք իշխանավորներ դժգոհում են իրենց հասցեին հնչած քննադատական ռեպորտաժներից ու հարցազրույցներից եւ իրենց պատեպատ են տալիս լուծումը գտնելու համար: Բայց այդ ամենը փոքրիկ զորաշարժեր էին այն ամենի համեմատ՝ ինչ տեղի է ունենում վերջին 3 շաբաթում: Այդ հանդիպումների ժամանակ հասկացա, որ գործ ունեմ իսկական գործարար մարդու հետ, ով մտադիր էր նաեւ օճառի արտադրություն ստեղծել Գյումրիում (դեռ չի ստեղծել, ու ռեժիմի խոսնակները ծիծաղելիորեն ապատեղեկացված էին.-Հայոց աշխարհ, 24.10.2007), հաճույք է ստանում դժվարություններ հաղթահարելիս, դեմ չէ ռիսկի դիմել, եւ ամենակարեւորը՝ **պատրաստ է կորցնել**: Երբեք նախկինում չենք զրուցել, թե ինչքա՞ն եւ մինչեւ ե՞րբ է պատրաստ կորցնել: Հիմա, այս զարգացումներից հետո պարզ դարձավ, որ իր դիրքորոշման ու իր ազատությունների համար պատրաստ է կորցնել այն ամենը, ինչ ներդրել է հեռուստաբիզնեսում: Ես մոտիկից ծանոթ եմ հեռուստատեսությունների մի քանի տասնյակ սեփականատերերի, որոնք ինքնագրաքննությունը մեկնաբանում են որպես տարիներով ստեղծածը չկորցնելու ցանկություն, եւ, հասկանալի է, ժխտում են, թե խոսքը ինքնագրաքննության մասին է:

Թերեւս գործող հեռուստաընկերությունների մեջ սա իմ իմացած առաջին դեպքն է, երբ հեռուստաընկերության սեփականատերը պատրաստ է «վառել ու փոշիացնել» այն ամենը, ինչ ստեղծել է, այն բանի դիմաց, որ որեւէ մեկը, ինչքան էլ այլոց համար ահարկու լինի, չկարողանա թելադրել իրեն չափավոր ազատության բանաձեւը. մասնակի ազատություն չի լինում կամ՝ ազատության մասնակիությունը կամավոր պարտականություն է, ոչ թե՝ թելադրված:

ԳԼԼԱ-ն կուսակցական կամ ընդդիմադիր հեռուստաընկերություն չէ եւ չի էլ եղել: Օբյեկտիվորեն, մարզերում չի էլ կարող լինել որեւէ ընդդիմադիր հեռուստաընկերություն կամ ՉԼՄ: Ընդդիմադիր

ասելիս ի նկատի չունեմ իշխանություններին շատ քննադատող ՉԼՄ, իմ խորին համոզմամբ, այդպիսիք բարեխիղճ լրատվամիջոցներ են, միշտ եւ ամենուր: «Ընդդիմադիր»-ը անհաջող բառ է, այդ բառը պայմանական եմ օգտագործում, ի նկատի ունեմ ընդդիմության հետ ֆինանսական, նյութական կամ ծագումնաբանական տեսանկյունից ուղղակիորեն կապված որեւէ հեռուստաընկերություն: **Նախ** հայաստանյան ընդդիմադիր կուսակցությունները այդքան հարուստ չեն, որ կարողանան իրենց շվաքի տակ ամենի որեւէ հեռուստաընկերություն, թեկուզ՝ մարզային, **հետո՝** մարզային եւ երեւանյան որեւէ հեռուստաընկերություն մեր իրականության մեջ միշտ էլ այնքան աղքատ չէ, որքան՝ ռեժիմից լեղաճաք: Եւ **ի վերջո**, Հայաստանյան ժողովրդագրությունն այնպիսին է, որ քաղաքականությունը կերտվում է մայրաքաղաքում. այստեղ է կենտրոնացած բնակչության քաղաքական ներուժը, բնակչության 1/3-ը, եւ Արարատյան դաշտի հեռուստառադիոհեռարձակման տիրույթը «ծածկում է» Հայաստանի բնակչության 2/3-ին: Այլ խոսքով, եթե անգամ Արարատյան դաշտից դուրս գտնվող բոլոր հեռուստառադիոընկերությունները լինեն որեւէ ընդդիմության խոսնակները, իշխանափոխության տեսանկյունից դրանք վճռական ազդեցություն ունենալ չեն կարող: Ահա այս պատճառով է նաեւ, որ որեւէ ընդդիմություն չի կամենա մարզային որեւէ հեռուստաընկերության տանիք դառնալ:

Մյուս կողմից, Վահան Խաչատրյանն այն մարդկանցից չէ, որ կամենար թաքցնել իր կուսակցական պատկանելությունը կամ համակրանքը, եթե այդպիսիք ունենար: Պարզապես իշխանությունները իրենց համապատասխան միջոցներով այնպես են հերկել, ներդաշնակել իրենց ու հսկել հեռուստառադիոհեռարձակման դաշտը, որ որեւէ անկանոնություն, ասենք ԼՏՊ ելույթի հեռարձակում, ասենք մի 20 րոպե, նման է մաքուր ճերմակ ներկած պատին մի ափաչափ բոսոր բծի. սա իրենց խելագարության է հասցնում ու ստիպում վիուկներ որոնել այդ ընկերություններում, տանիք որոնել այդ հեռուստաընկերության գլխին, ստիպում է կարծել, թե ահա սա՝ այսինչ կուսակցության խոսափողն է: Լավ բան մտքներով չի անցնում, ասենք, որ մարդը կարող է, սխալմամբ, լուրջ է ընդունել Սահմանադրությունը, ուզում է թարսի պես բազմակարծություն ապահովել, մտքներով չի անցնում, որ ԳԱԼԱ-ն ինչ-որ տեղ հենց իրենց գործն է անում: Էլ չխոսեմ այն մասին, որ այս պարոնայք, ԳԱԼԱ ՀԸ նկատմամբ ճնշումներն իրագործելիս ֆինանսավորվում են ... մեր ու ԳԱԼԱ ՀԸ գրպանից՝ մեր վճարած հարկերից:

«Հայոց աշխարհ» թերթը վերջին 7 օրերին երեք հրապարակում է ունեցել, որոնք ամբողջությամբ կամ մասնակիորեն վերաբերվել են ԳԱԼԱ հեռուստաընկերությանը: Ելնելով այն հանգամանքից, որ դրանցում դիտավորյալ կերպով խստորեն աղավաղված ու խեղաթյուրված են փաստերը, կարծում եմ, պարտավոր եմ ներկայացնել ստորեւ բերվող մեկնաբանությունները, ակնհայտ սխալներն ու դիտավորությունները: Միայն այսպես է հնարավոր հանրությանը լիարժեքորեն իրազեկել. թերթը պատմում է իրողության 20-30 տոկոսը, այն էլ 90 տոկոսով սուտ: Այդ թերթի համար արդեն պիտի որ պարզ դառնա, որ ցանկացած ապատեղեկացում եւ զրպարտություն համարժեք խայտառակման է արժանանալու:

Այսպես. «Հայոց աշխարհ» թերթը հոկտեմբերի 24-ին լույս էր ընծայել «Այդ հնարքը մեզանում բազմիցս է կիրառվել» վերնագրով մի հոդված, որ չեմ համարձակվում վերլուծություն կոչել: Դրանում Լիլիթ Պողոսյան բանասեր-ստեղծագործողը փորձել էր հենվել ՀՀ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ, տիրաառչակ Գրիգոր Ամալյանի մտքերի վրա (տիրաառչակ բառի հիմքերը տես Ա1+ եւ Նոյան Տապան հեռուստաընկերությունների եթերազրկան պատմության, հեռուստաընկերություններին ընտրովի պատժելու, համապատասխան օրենքները կամայականորեն կիրառելու փաստերի շարանների մեջ):

« Տնօրենը բողոքել է, թե անհայտ ուժերն սպառնում են փակել հեռուստաընկերությունը: ... »

Սուտ է: Տնօրենը չի բողոքել, թե անհայտ ուժերը սպառնում են փակել հեռուստատեսությունը, նման բան չի եղել: Տնօրենը բոլորովին որեւէ բան չի ասել, մամուլի որեւէ հրապարակման մեջ տնօրենի խոսք չկա: Ասել է հիմնադիր սեփականատերը եւ շատ հստակ նշել է բոլոր այն կառույցները, որոնք իրեն հորդորել են, համոզել, խնդրել ու պահանջել եթեր չտալ ԼՏՊ սեպտեմբերի 21-ի ելույթը, հեռուստահաղորդմանը հյուր չընդունել Նիկոլ Փաշինյանին: (Ազատություն ռադիոկայան, հարցազրույցներ, 22.10.2007:) Տեղեկացումը բողոք չէ: Եկեք 5 րոպե զրուցեք այդ մարդու հետ, 3-րդ րոպեին կկռահեք, որ սեփականատերը բողոքող տեսակից չէ:

« ... Եւ այսպես, ո՞վ է ճնշում եւ առանց ձեւականությունների քաղաքական հետապնդումների ենթարկում ԳԱԼԱ-ի սեփականատիրոջը: Բախտորոշ այս հարցի պատասխանն ստանալու ակնկալիքով դիմեցինք ՀՌԱՀ նախագահ ԳՐԻԳՐ ԱՄԱԼՅԱՆԻ: ... »

Իսկ ավելի արդյունավետ չէ՞ր դիմել ՆՍՕՏՏ Գարեգին Բ կաթողիկոսին ԳԱԼԱ-յի սեփականատիրոջ նկատմամբ ճնշումներ բանեցնողներին պարզելու համար: Կաթողիկոսն իմաստուն մարդ է,

կիմանա՝ ճիշտ է արդյոք դա, թե՞ հերյուրանք՝ անաղարտ վախեցնիչների հասցեին: Բա որ «... թե անհայտ ուժերն սպառնում են», լրագրողն ինչու է որոշել դիմել Ամալյան Գրիգորին: Ինչ կարիք կար «վառել», այսինքն բացահայտել անհայտ ուժերի հետ կապ ունեցողին: Ամալյան Գրիգորն էլ, չի կռահել, ասի. -Քույր իմ նազելի, Լիլիթ Պողոսյան, անհայտ ուժերի մասով ինչո՞ւ ես ինձ դիմում պարզաբանում ստանալու համար: -Այ քեզ խայտառակություն:

« ... Գուցե Յեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ղեկավարությունն է «նեղացրել» հեռուստաընկերությանը, ... »: Իսկ գուցե Վահան Խաչատրյանը վատ երազ է տեսել անհայտ ուժերի վրա, ու դա մեկնաբանում է որպես ճնշում հեռուստաընկերության նկատմամբ: Բա մի հատ էլ Վահանին զանգեիք:

« ... սեփականատերը, գյումրեցիներին «անկախ» տեղեկատվությամբ ապահովելուն զուգահեռ, զբաղվում է մանր բիզնեսով: Մասնավորապես, փորձում է հոգալ համաքաղաքացիների սանիտարահիգիենիկ կարիքները: Այլ կերպ ասած՝ «սապոնի գործ» է անում:»

Այ մարդ, եդ ինչքա՞ն անմարդկային հրեշ պիտի լինի հեռուստատեսության սեփականատերը, որ միաժամանակ օճառի ու լվացող այլ միջոցների արտադրությամբ զբաղվի: Մի՞ թե չգիտե, որ այդ ոլորտները մենաշնորհված են ու օձն իր պորտով, հավքն իր թելքով չի կարող խցկվել այդ բիզնեսի գայլերի արանքը: Ի՞նչ միամիտ է ԳԱԼԱ-ի սեփականատերը: Մանավանդ... իրականում «սապոնի գործ» չի անում: Կրկնում եմ «Հայոց աշխարհ» թերթի բանասեր-ստեղծագործողների, ՀՀ ՀՊԾ, ՀՀ ԱԿԾ, ՀՀ Նախագահական պալատի, եւ ՀՀ ՀՌԱՀ բոլոր ներկա եւ նախկին աշխատակիցների համար. ԳԱԼԱ ՀԸ հիմնադիր սեփականատեր Վահան Խաչատրյանը օճառ չի արտադրում որեւէ կարգավիճակով: Չի արտադրում լվացքի, ամանեղենի, հագուստի ու լվանալու ենթակա որեւէ բանի որեւէ փոշի, փրփուր, հեղուկ, անգամ «ղալիք սապոն» չի արտադրում, ինչ ճանաչում եմ Վահան Խաչատրյանին, նա որեւէ նման բան չի արտադրել, չի ներկրել, չի վերավաճառել, չի արտահանել: Պատկերացրի՞ք: Դժվար է, բայց կարող եք պատկերացնել, որ թերթի գրածը մի այնպիսի սուտ է, ինչպիսիք շրջանառության մեջ են մտցվում հետագա օպերացիաները նախապատրաստելու համար: Իմիջիայլոց, բազմաթիվ վաճառականներ ու ոչ վաճառականներ սպասում են Վահան Խաչատրյանի օճառի արտադրությանը: Ոչ վաճառականներից այդ հարցով մի մտահոգ կարգավորող այդ հարցազրույցի շնորհիվ կարողացավ նպատակին հասնել. Վահան Խաչատրյանը նրան մի արկղ օճառ խոստացավ, առանց օգտագործման ուղեցույցի, համարեց որ դրա կարիքը չկա:

Ավելին ասեմ, գուցե դա ԳԱԼԱ ՀԸ-ի դեմ բանսարկուներն օգնի այս գիշեր քնել. Վահան Խաչատրյանի «սապոնի գործ անելը» իմ արտահայտությունն է, ու ես եմ եղել այդ արտահայտության շրջանառության մեջ դնողներից մեկը մասնավոր գրույցներում՝ մի քանի տարի առաջ: Երկու պատճառով. մեկը, երբ նկատել եմ, որ անազնիվ հետաքրքրություններ ունեցողներն են անպայման ուզում իմանալ, թե «Էդ ինչի՞ տեր է, որ հեռուստատեսություն է հիմնում» (գործող 1-2 հեռուստաընկերությունների տերեր, իշխանությունների ներկայացուցիչներ, աչքածակ ու նախանձ մարդիկ, եւ այլն), ու... ես կարող եմ այդ արտահայտությունը «Հայոց աշխարհ» թերթում: Նման ստուգողական թակարդներից խուսափելու համար բանասեր-ստեղծագործողի փոխարեն պիտի լրագրող լինել, ու մի փոքրիկ բան անել, չէք կռահում՞ ինչ, ՍՏՈՒԳԵԼ ՓԱՍՏԵՐԸ: Ոչ ոք փաստ, ապացույց, փաստարկ կամ փաստիկ չունի այն մասին, որ Վահան Խաչատրյանը «սապոնի գործ» է անում, կամ՝ արել է առնվազն վերջին 7 տարիներին: Ես գյումրիում քրքրեցի, չգտա նման փաստ: Գյումրու խանութներում էլ եմ հարցրել: Ի՞նչն էր ստեղծագործող Լիլիթ Պողոսյանին խանգարում Ամալյանի ու մյուսների կարծիքներն իմանալուն զուգահեռ մի հատ էլ զանգել 031231819 հեռախոսահամարով ու հենց հեռուստաընկերության գլխավոր պատասխանատուից էլ ճշտել: Գիտեմ, կամքն էր խանգարում, նրան ոչ թե որակյալ լրագրողական աշխատանք էր պետք, այլ հեռուստաընկերության եւ հիմնադրի վարկաբեկում:

«... հեռուստաընկերությանը, որ ընդամենը երկու-երեք տարի է գործում այս դաշտում եւ նոր-նոր է փորձում կայանալ տվյալ ոլորտում՝ ձգտելով հավասարվել այնպիսի հայտնի ընկերությունների հետ, ինչպիսին «Շանթ» է կամ, ասենք, Գյումրիի «Ցայգ» հեռուստաընկերությունը:....»: Այս միամիտ ու անլուրջ մտքի համար որեւէ հիմք չունի հողվածագիրը, կամ իր նենգամիտ աղբյուրները հիշատակել չի համարձակվում: Բա փորձեր մի հատ հարցնել ԳԱԼԱ ՀԸ սեփականատիրոջը. կամենո՞ւմ է նա հավասարվել «Շանթին» կամ «Ցայգին»: Վստահ եմ, Լիլիթ Պողոսյանը ԳԱԼԱ ՀԸ մակարդակի մասի տեղյակ չէ այնպես, ինչպես տեղյակ չէ «Ցայգ» ՀԸ մակարդակին:

«... Ըստ նրա՝ (Գրիգոր Ամալյանի մասին է խոսքը-Լ.Բ.) «պետական մարմինների, առավել եւս՝ հանձնաժողովի կողմից, ԳԱԼԱ հեռուստաալիքի նկատմամբ քաղաքական հետապնդում չկա: Չեր

Էլ կարող լինել, որովհետեւ այդ ընկերությունը երբեւիցե քաղաքական, նույնիսկ քաղաքացիական կեցվածքով չի առանձնացել:...»

Խելքի նայեք, Ամալյան Գրիգորը ակամա խոստովանում է իր մշտական ու ամբողջ գործառույթն ու առաքելությունը. ուրեմն եթե ԳԱԼԱ-ն քաղաքական կեցվածքով կամ քաղաքացիական կեցվածքով առանձնանար, դրան ի պատասխան քաղաքական հետապնդում կլինե՞ր: Կամ եթե չի եղել քաղաքական հետապնդում, ուրեմն, դե՞ քաղաքացիական կեցվածք էլ չի եղել, միայն այդ պատճառով: Այսպես կարելի է կարծել, որ մյուս բոլոր հեռարձակողներից որեւէ մեկը քաղաքացիական կեցվածք չունի: Քաղաքացիական կեցվածք ունեցածներին ուրեմն եթերազրկել են: Ամենազխաժոր սուտը. Գրիգոր Ամալյանը ուղղակի եւ ֆիզիկապես տեղյակ չէ ԳԱԼԱ ՅԸ ծրագրային քաղաքականությանը, կամ ծանոթ է խիստ ընդհանուր՝ արտոնագրման մրցութային փաթեթից եւ արտոնագրի պայմաններից, որոնք սահմանվել են 2 տարի առաջ: Դրանից հետո այդ պարոնը որեւէ հսկողական մեխանիզմով չի ծանոթացել ԳԱԼԱ-ի ծրագրային քաղաքականությանը: Իսկ եթե ծանոթ լիներ, ապա կիմանար, որ հեռուստաընկերության սկզբունքներն են ազատությունը, բազմակարծությունը, սրանցից բխած բոլոր հետեւանքներով: Ամենայն հավանականությամբ, ԳԱԼԱ ՅԸ ծրագրային քաղաքականության մասին նրան պատմել են ընդամենը այն, ինչ հաճելի է եղել լսել:

Բացի այս, Գրիգոր Ամալյանն այդ մտքերով ուղղակի փորձում է նվազեցնել ԳԱԼԱ ՅԸ դերը, հեղինակությունը եւ վարկանիշը, ինչն անելու բարոյական իրավունք, որպես ոլորտը կարգավորող մարմնի գլուխ, չունի: Դրանով մի երկրորդ նապաստակ էլ է խփում իր հալով. իբր այս ալիքը վարկանիշ չունի, չի կայացել ու ազդեցիկ չէ, դե արի ու անտեղյակ գովազդատու, դրանց գովազդի պատվեր տուր: Բարեբախտաբար, գովազդատուները գիտեն, թե ով է Ամալյան Գրիգորը, եւ նման սուտլիկ բաներից չեն ազդվում (դրա համար ռեժիմն ուրիշ գործիքներ է օգտագործում), այս խոսքերն ուղղակի հակառակ ազդեցությունն են ունենում: Այդ հայտարարությունները լիազորությունների ուղղակի վերազանցում են ու՝ պաշտոնական դիրքի չարաշահում. ՀՌԱՀ նախագահը, պիտի կռահեր, որ իր պաշտոնը կաշկանդված է հեռուստաընկերություններին նման գնահատականներ (կայացել է-չի կայացել, քաղաքացիական դիրքորոշում ունի-չունի...) տալու ազատության իրավունքից. ինքը հասարակ հեռուստադիտող չէ, այլ՝ ոլորտը կարգավորող պետական մարմնի նախագահ: Այդօրինակ գնահատականներից հետո, ցանկացած մեկը կարող է ենթադրել, թե այդ պաշտոնյան գուցե սովորային փայտե՞ր է մյուս ընկերությունների հետ: Այս կանխավարկածները չգործարկելու համար, գոնե, նման պաշտոն զբաղեցնողը պիտի առաջնորդվի միայն օրենքով եւ իր ունեցած լիազորություններով: Փոխանակ ասեր, թե մինչ օրս ԳԱԼԱ ՅԸ-ն որեւէ բանավոր կամ գրավոր նկատողություն չի ստացել կամ ստացել է, չի տուգանվել, կամ տուգանվել է այսինչ բանի համար... ասում է մտքեր, որ վայել են հեռուստաընկերության լրատվական քաղաքականությունից կամ սեփականատիրոջից դժգոհ ու զառամյալ զրպարտչի:

Իսկ թե ինչից էր դժգոհ Ամալյան Գրիգորը, բավականաչափ պարզաբանեց Վահան Խաչատրյանը իր հայտարարություններից մեկում. «...քաղաքական հետապնդումները բացառող անձնավորությունը երեւի մոռացել է, որ ինքը լրատվամիջոցի խոսքի ազատությունը սահմանափակողների կամակատարն է ու հանձնաժողովը՝ այդ գործի գործիքը: Եթե մոռացել է, մենք կհիշեցնենք, որ «ԳԱԼԱ»-ի հոկտեմբերի 14-ի հայտնի եթերաժամից հետո (երբ ամբողջությամբ եթեր է հեռարձակվել Լ.Տեր-Պետրոսյանի սեպտեմբերի 21-ի էլույթը «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում) անմնացորդ խառնաշփոթի մեջ ընկած պաշտոնյաներից մեկն էր...»:

Այդ խառնաշփոթն է պատճառը, որ Ամալյան Գրիգորը խղճուկ եզրահանգման է գալիս. «...Այդպիսով (ԳԱԼԱ-ի խնդրի քաղաքականացմամբ -Լ.Բ) թերեւս հույս ունեն շահել ժողովրդի համակրանքը եւ ստանալ հասարակության օժանդակությունը՝ կարգավորելու պետական մարմինների հետ ունեցած խնդիրները եւ պաշտպանվելու նրանց օրինաչափ պահանջներից», - արձանագրում է ՀՌԱՀ նախագահը:

Ինչ էլ բառ է սերտել՝ օրինաչափ: Տեսնես իր վարքն օրինաչափ է: Իսկապես Ամալյան Գրիգորը միամիտ է այնքան, որ կարծում է, թե Հայաստանի պես երկրում հեռուստատեսություն փակելու դեմ կարելի է պայքարել հանրության օժանդակությամբ: Ա1+-ի եւ Նոյան Տապանի դեմ իր սանձազերծած, ներողություն՝ իրագործած ասպատակության հանրային արձագանքները որքա՞ն օգնեցին այդ ընկերություններին վերականգնել իրենց կրած վնասը եւ վերադառնալ հեռուստաեթեր: Ոչ մի միլիմետր:

Հարցազրույցի «ամենալուսավոր» միտքը. «...բարոյական չէ, երբ հանրային ռեսուրսը, որ այս կամ այն ընկերությանը տրամադրվել է հանրային շահն ապահովելու համար, մարդիկ օգտագործում են որպես տանիք՝ սեփական շահերը սպասարկելու համար»: ...Զգիտելնք, այ մարդ:

Հիշյալ դարակազմիկ միտքն ընթերցելիս, ամեն անգամ մտածում եմ. - Բարոյական է, ուրեմն, երբ համանման հանրային ռեսուրսը (այլ հեռուստառադիոհաճախականությունների մասին է խոսքը) մարդիկ օգտագործում են Ամայանին նշանակողին ու ոչպաշտոնական հանձնարարականներ տվողներին գովերգելու համար, բարոյական է, երբ նույն հանրային ռեսուրսն իր թեթեւ ձեռքով վերցվում է 7 տարվա փորձառությամբ մի հեռուստաընկերության ձեռքից ու տրվում հեռարձակման փորձ չունեցող այլ հեռուստաընկերության, որն այն՝ տնօրինող իրավաբանական անձի հետ ծախում է մի երրորդի (օրենքով միայն արտոնագիրը ծախել էն կարող), սա՛ մի չորրորդի, ուրեմն բարոյական է, որ նույն հանրային ռեսուրսը իր եւ իր հրամանատարների կամքով տրվում է կերուխում ցուցադրողներին, հայկական դարավոր մշակույթը, երգն ու դավանանքը այլասերողներին, բարոյական է, ուրեմն, նույն հանրային ռեսուրսը մյուս հեռարձակողների մասով դիտավորյալ չհսկելն ու դիտավորյալ ընտրովի հսկելը:

Մասնավոր հեռուստաընկերությունները տեսնես ինչո՞ւ են աշխատեցնում այդ հեռուստաընկերությունները: Որքան մեզ է հայտնի՝ բոլորն էլ շահույթ են հետապնդում: Եթե կա որեւէ անբարոյական բան դրանում, ապացուցեք ու մրցույթների ժամանակ նախատինք տվեք: Չեք կարող ապացուցել: Մի դրվագում Ամայան Գրիգորը ճշմարիտ է «...որպես տանիք...», իրավացի է, կյանքն իմացող մարդ է, հիանալ կարելի է: Մեր երկրում տանիք չունեցար, առավուտ քնից կելնես, որ ...չկաս, վրայովդ 15 հարկային, 30 ԱԱԾ, 5 ՀՌԱՀ ու 1000 հատ հաստավիզ է անցել... ինչ փառահեղ իմաստություն: Այո, ԳԱԼԱ հեռուստաընկերությունը ինքն իր հեռուստաբիզնեսի տանիքն է, ինչ մի մեծ հայտնագործություն է:

«...Ավելի քան մի տարի առաջ ԳԱԼԱ-ի տնօրենը դարձյալ աղմուկ բարձրացրեց, հայտարարելով, թե քաղաքական հայացքներիս համար ինձ հալածում են: Սա այն դեպքում, երբ երկրում ընդհանրապես քաղաքական գործընթացներ, ընտրություններ չկային...»:

Սուտ է: Սա էլ է սուտ, Լիլիթ Պողոսյան: Սուտ է, թե տնօրենը (սեփականատիրոջն ի նկատի ունեք երեւի) աղմուկ է բարձրացրել իր քաղաքական հայացքների հետապնդման համար: Որովհետեւ, քաղաքական, մերձքաղաքական, կուսակցական կամ մերձկուսակցական արտահայտված որեւէ դիրքորոշում չի ունեցել ու... ոչինչ այդ ուղղությամբ չի ասվել: Իսկ խնդիրը, որի մասին փսփսացել են ձեր ակնաչին, բոլորովին այլ դաշտից էր, եթե հետաքրքիր է, համեցեք Գյումրի, մանրամասներին իրազեկվեք սկզբնաղբյուրից:

« ...«Հայոց Աշխարհ»-ը կփորձի հետամուտ լինել՝ որտե՞ղ է թաքնված շան գլուխը: Եւ պարզել՝ ի՞նչ խնդիրներ ունի Վ.Խաչատրյանը հարկայինի հետ, որ որոշել է գլխապատառ նետվել՝ գյումրեցիների տեղեկատվություն ստանալու ազատությունը պաշտպանելու ազատ խոսքի նկատմամբ բռնացող հայտնի կամ անհայտ շրջանակների դաժան ոտնձգություններից...»:

Էլի դիտավորյալ շփոթ է սարքած. ոչ թե Վ. Խաչատրյանը ինչ-որ խնդիր ունի հարկայինի հետ, այլ հարկայինն ինչ-ինչ խնդիր ունի նրա հետ: Թերթն իր խոստումը կատարեց, հաջորդ օրը եւ հոկտեմբերի 31-ին երկու «գոհար» տպեց ու խայտառակվեց: Փոխանակ իսկապես հետամուտ լինե՞ր ու՝ խորամուխ, կոնֆլիկտի բոլոր կողմերին ու նրանց հարակից թեւերի հետ զրուցե՞ր, որ հողվածներն արժեքավոր դառնային, շարունակեց լինել հարկայինի խոսափողը:

ԳԱԼԱ ՀԸ-ն պնդում է, թե իր նկատմամբ իշխանությունները ճնշումներ է բանեցնում եւ իջել է հարկայինների միջոցով հեռուստաընկերությունը խեղդելու մակարդակին, որովհետեւ ինքը չի լսել իշխանությունների «հորդորները» ԼՏՊ-ին եւ նրա համակիրներին եթեր չտրամադրելու մասին ու վարում է լրատվական անկախ քաղաքականություն:

ՀՀ Հարկային պետական ծառայությունը «Հայոց աշխարհի» բանասեր-ստեղծագործողների բերանով պնդում է, թե ԳԱԼԱ ՀԸ-ն բողոքում է հարկային ստուգումների դեմ ու փորձում է այդ ամենը քաղաքականացնել, որովհետեւ հարկային տեսական ստուգումների արդյունքում պարզվել է, որ վերջինս հարկային օրենսդրության աղաղակող խախտումներ է թույլ տվել:

Ո՞վ է ճշմարիտ:

Վերլուծենք այս ամենը ժամանակագրության տեսանկյունից: Ժամանակն, ինչպես գիտեք, դեռ որեւէ մեկին չի հաջողվել շուռ տալ:

21 սեպտեմբերի. -ԳԱԼԱ ՀԸ նկարահանող խումբն այցելեց Երեւան, նկարահանեց ԼՏՊ ելույթն ամբողջությամբ, նույն օրը երեկոյան լրատվական թողարկման մեջ հեռարձակվեց ռեպորտաժ այդ մասին:

22 սեպտեմբերի.-Կիրակնօրյա վերլուծական ծրագրում 6 րոպե տեւողությամբ ռեպորտաժ հաղորդեց Նույն իրադարձության մասին:

14 հոկտեմբերի.-Կիրակի երեկոյան ԳԱԼԱ ՅՇ-ը եթեր հեռարձակեց LSՊ սեպտեմբերի 21-ի ելույթն ամբողջությամբ.

Նույն օրը եւ հոկտեմբերի 15-ին Գյումրու եւ Շիրակի մարզի ԱԿԾ պաշտոնյաները զրույցներ ունեցան սեփականատեր Վահան Խաչատրյանի հետ այն մասին, թե LSՊ-ին եւ Նրա համակիրներին եթեր հեռարձակելը կվնասի իրեն՝ Վահան Խաչատրյանին եւ հեռուստաընկերությանը, հարկավոր է հեռու մնալ եւ չհեռարձակել այդօրինակ նյութերը: Վահան Խաչատրյանը պնդել է, թե շարունակելու է վարել իր անկախ լրատվական քաղաքականությունը եւ չի ենթարկվելու որեւէ ճնշման: ԱԿԾ պաշտոնյաները խոստացել են այլ միջոցներ գտնել եւ խնդրել են այդ խոսակցությունը փակ պահել: Վահան Խաչատրյանը չի խոստացել այդ անել:

Հոկտեմբերի 15-ին, երկուշաբթի, Վահան Խաչատրյանին զրույցի է հրավիրել Գյումրու հարկային Նախկին եւ Ներկա տնօրեն Մարտին Չիլֆիմյանը (գյումրեցիների շրջանում հայտնի է 1996-ին եւ 1998-ին տեղական մեկ այլ հեռուստաընկերության դեմ սանձազերծած ու չհաջողած հարկային հալածանքով) հորդորել է չապակայունացնել իրավիճակը, վերջ տալ LSՊ-ին եւ Նրա համախոհներին եթեր տրամադրելը, եւ, մասնավորաբար, Նույն օրը ԳԱԼԱ-ի հաղորդաշարերից մեկին հրավիրված Նիկոլ Փաշինյանին հյուր չընդունել: Վահան Խաչատրյանը մերժել է խնդրանք-հորդորները:

Հոկտեմբերի 15-ից Երեւանյան հեռուստաընկերությունները դադարել են լուսաբանել Երեւանյան մամուլի բանավիճային ակումբներում տեղի ունեցող մամլո ասուլիսներն ու քննարկումները:

Հոկտեմբերի 15-ի երեկոյան ԳԱԼԱ-յում հարցազրույցի հյուր է եղել «Այլընտրանք» շարժման ղեկավար եւ «Հայկական ժամանակ» թերթի խմբագիր Նիկոլ Փաշինյանը:

Հոկտեմբերի 17, չորեքշաբթի, Վահան Խաչատրյանին զրույցի է հրավիրել ՀՌԱՀ Նախագահ Ամալյան Գրիգորը, եւ 1,5 ժամ հորդորել այն, ինչ հորդորել են մարզի ԱԿԾ պաշտոնյաներն ու Չիլֆիմյան Մարտինը: Մերժում ստանալով, խոստացել է ստուգումներ պատվիրակել Գյումրի:

Հոկտեմբերի 17-ի երեկոյան, ԳԱԼԱ-յում հարցազրույցի հյուր է եղել ՀՀԿ անդամ, մարզպետարանի աշխատակից Բորիս Ալեքսանովը:

Հոկտեմբերի 18-ից սկսած հարկային տարբեր պաշտոնյաներ են այցելել ԳԱԼԱ-ի գովազդատուներին, գովազդային փաստաթղթեր են պահանջել եւ հորդորել այլեւս գովազդ չտեղավորել ԳԱԼԱ-ի եթերում, քաղաքում լուրեր են տարածել, թե ԳԱԼԱ-ն փակվելու է: Վանաձորում լուրեր են տարածվել, թե ԳԱԼԱ-ից հեռարձակման արտոնագիրը վերցվել է արդեն: Գովազդատուների նկատմամբ հորդորները, անօրինական ճնշումները հարկային տեսուչների եւ ԱԿԾ աշխատակիցների կողմից շարունակվում են 31.10.2007 դրությամբ: Հարկայինները Նախ ծանոթանում են ԳԱԼԱ ՅՇ հետ երբեւէ ունեցած ֆինանսական, ֆիսկալ, հաշվապահական փաստաթղթերին, ապա հորդորում ու խրատում ԳԱԼԱ ՅՇ եթերից հանել իրենց գովազդային պատվերները եւ չաշխատել վերջինիս հետ: Այս մասին գովազդատուները անհապաղ պատմում են Վահան Խաչատրյանին եւ խնդրում հանել գովազդը, անգամ հրաժարվում են գումարի վերադարձից, եւ խնդրում իրենց անձը չհրապարակել:

Հոկտեմբերի 19-ին Երեւանի Մամուլի ակումբը, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն, Վանաձորի մամուլի ակումբը, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը եւ Հայաստանի հելսինկյան կոմիտեն հանդես եկան հայտարարությամբ, որում քննադատեցին մամուլի ակումբների բոյկոտն ու ճնշումները հեռուստաընկերությունների վրա: Այս մասին լուսաբանվել է ԳԱԼԱ-ի լուրերում:

Հոկտեմբերի 19-ի երեկոյան, ԳԱԼԱ-ում հարցազրույցի հյուր է եղել ԲՀԿ անդամ, մարզպետարանի աշխատակից Մարզպետունի Մարգարյանը:

Հոկտեմբերի 20-ին, **շաբաթ օրով**, Վահան Խաչատրյանի անձնական սեփականություն հանդիսացող տարածք են այցելել 5 հարկային օպերիվագորներ՝ 3-ը Երեւանից, երկուսը՝ Գյումրիից, եւ կամեցել են ծանոթանալ տարածքի շինություններին: Այն բանից հետո, երբ Վահան Խաչատրյանը տարածք է հրավիրել հեռուստանկարահանող խմբի, այցելուները թողել են տարածքը: Այս մասին լուսաբանվել է ԳԱԼԱ-ի լուրերում:

Յուլի 22-ին ԳԱԼԱ ՅԸ հիմնադիր Վահան Խաչատրյանը հանդես եկավ հայտարարությամբ, որում ասում է, թե շարունակելու է իր ազատ լրատվական քաղաքականությունը, բազմակողմանի եւ օբյեկտիվորեն լուսաբանելու է այն ամենը, ինչ կա մեր իրականության մեջ: Նույն օրը Ազատություն ռադիոկայանը հեռարձակեց Վ.Խաչատրյանի հետ հարցազրույցն այն մասին, որ մի քանի պետական պաշտոնյաներ փորձել են ճնշումներ բանեցնել հեռուստաընկերության վրա, որով փորձել են փոխել վերջինիս լրատվական քաղաքականությունը:

Յուլի 22-ի երեկոյան, ԳԱԼԱ-յում հարցազրույցի հյուր է եղել Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը: Խոսվել է նաեւ ԳԱԼԱ ՅԸ նկատմամբ կիրառվող ճնշումների մասին:

Յուլի 23, երեքշաբթի, ժամը 15-ին ԳԱԼԱ ՅԸ են այցելել երեւանյան 3 տեսուչներ եւ պաշտոնապես՝ գրավոր տեղեկացրել, որ 3 օրից կարող են գալ «ԶԱՊ ՍՊԸ-ի (ԳԱԼԱ ՅԸ հիմնադիր) եւ պետական բյուջեի հետ հարաբերությունների ստուգման»: Այս մասին լուսաբանվել է ԳԱԼԱ-ի լուրերում:

Յուլի 24-ի երեկոյան, ԳԱԼԱ-յում հարցազրույցի հյուր է եղել «Ժառանգություն» կուսակցության անդամ, ՅՅ ԱԺ պատգամավոր Լարիսա Ալավերդյանը: Խոսվել է նաեւ ԳԱԼԱ ՅԸ նկատմամբ կիրառվող ճնշումների ու նախորդ երեկոյան երեւանում խաղաղ, իրազեկող քայլերի մասնակիցների նկատմամբ կիրառված ճնշումների, նրանց ձերբակալության ու ազատման մասին:

Յուլի 24. «Յայոց աշխարհ» թերթում լույս է տեսնում Լիլիթ Պողոսյանի «Այդ հնարքը մեզանում բազմիցս է կիրառվել»՝ վերելում հիշատակված հոդվածը՝ ներծծված Գրիգոր Ամալյանի մտքերով: Սա եղել է Ամալյան Գրիգոր-Վահան Խաչատրյան առանձնազրույցից 1 շաբաթ անց, եւ այն բանից հետո, երբ հարկայինի գրոհն արդեն օրինական տեսք էր ստացել: Այդ հոդվածում է առաջին անգամ հրապարակվում տեղեկություն այն մասին, որ Վահան Խաչատրյանը, իբր, զբաղվում է նաեւ օճառի արտադրությամբ: Իրականում Վ. Խաչատրյանը միայն **մտադրություն ուներ** այդ գործով զբաղվել: Դա հստակ ապատեղեկատվություն էր Ամալյանի փոխանցմամբ, եւ դատելով այն հանգամանքից, որ դեռ 4 օր առաջ հարկային օպերիւիազորները այցելել էին Վահան Խաչատրյանի անձնական տարածք՝ շենքերն ու դրանցում առկա ինչ-ինչ գույքն ուսումնասիրելու, «օճառի կոմպրոմատը» լրջորեն քննարկվել է Ամալյան-հարկային եւ, ամենայն հավանականությամբ, էլի մի քանի շահագրգիռների շրջանակներում:

Յուլի 25. Վահան Խաչատրյանը հանդես է գալիս հայտարարությամբ, որում պատասխանում է Ամալյան Գրիգորին, բացահայտելով վերջինիս մտահոգության պատճառը, խոստանալով Օճառի գործարան գործարկելիս, նրան ուղարկել առաջին խմբաքանակից մի արկղ, ու վերահաստատում իր դիրքորոշումը, որ ԳԱԼԱ ՅԸ-ը շարունակելու է լուսաբանել ամեն իրադարձություն եւ երեւույթ՝ անկողմնակալ եւ օբյեկտիվ:

Յուլի 25. «Յայոց աշխարհ» թերթում լույս է տեսնում անստորագիր մի հարցազրույց ՅՅ ՅՊԾ պետ Վահրամ Բարսեղյանի հետ, որում վերջինս ուղղակի ասում է հետեւյալը. «...Իրականում, Յարկային պետական ծառայության աշխատակիցներն արդեն տեւական ժամանակ է, ինչ պլանային ստուգում են անցկացնում ԳԱԼԱ հեռուստաընկերության հիմնադիր հանդիսացող «Զապ» ՍՊԸ-ում...»: **Սա բացարձակ սուտ է, եւ ժամանակի տեղաշարժը սարքված է հատուկ այն նպատակով, որ Վ. Բարսեղյանի հայտարարությունը, թե՛ հարկային օրենսդրության բազմաթիվ խախտումներ են հայտնաբերված արդեն (ու հետո սարքվելիքը կամ գտնվելիքը) հիմնավոր դառնա եւ ԳԱԼԱ ՅԸ գործը քաղաքականից տնտեսականացումը՝ չնկատվի:** Հարցազրույցը Վ.Բարսեղյանը տվել է ամենաուշը հոկտեմբերի 24-ին, իսկ ԳԱԼԱ-ի ստուգման մասին պաշտոնական իրազեկումը Վահան Խաչատրյանին եղել է հոկտեմբերի 23-ին, եւ փաստացի սկսվել ավելի ուշ՝ հոկտեմբերի 29-ին միայն: Ստացվում է, որ Վահրամ Բարսեղյանի համար ապագա 5 օրերը «...արդեն տեւական ժամանակ» է: Հարցազրույցում պարոնը պնդում է, որ մի շարք օրինախախտումներ են հայտնաբերել արդեն ԳԱԼԱ ՅԸ հիմնադիր «ԶԱՊ» ՍՊԸ-ում: **Սա ասվում է «ԶԱՊ» ՍՊԸ-ում ստուգումները սկսելուց 4 օր առաջ:** Այս տեսանկյունից իրադրությունը նման է Տիգրան Նաղդալյանի սպանությունից անմիջապես հետո Քոչարյան Ռոբերտի արած այն հայտարարությանը, թե «հետքերը տանում են Դավալու» (ինչ առյուծի սիրտ կերած հետաքննիչներ պիտի լինեին, որ... հետքերը Դավալու չտանեին): Առանց «ԶԱՊ» ՍՊԸ-ում ստուգում սկսելու, ի՞նչ գիտեր ՅՊԾ պետը, թե «...Այսպես, ստուգումներով պարզվել է, որ «Զապ» ՍՊԸ-ն 2002 թվականից ապօրինաբար զբաղվել է «բենզալյան կրակների» չլիցենզավորված արտադրությամբ, որը, համաձայն ՅՅ օրենսդրության, լիցենզավորման ենթակա գործունեություն է...»: Ստացվում է, որ ԳԱԼԱ ՅԸ հիմնադիր «ԶԱՊ» ՍՊԸ-ի **գաղտնի ստուգմամբ** հարկայինն զբաղվել է այլ տնտեսավարողների կամ ֆիզիկական անձանց հարցաքննելով կամ ստուգելով, առանց նախազգուշացման, գուցե նաեւ թափանցել են ՍՊԸ գրասենյակ, գաղտնի ծանոթացել հաշվապահական եւ ֆիսկալ փաստաթղթերին, գուցե, առանց դատարանի որոշման,

գաղտնալսել են ՍՊԸ հեռախոսները...: Որքանով է օրինական այս ամենը: Բայց հանրահայտ է, ու **հարկային ստուգում** համարվում է այն, ինչն օրինական է, այսինքն, արվում է պատշաճ իրազեկմամբ, իսկ պատշաճ իրազեկում «ՉԱՊ» ՍՊԸ-ին արվել է հոկտեմբերի 23-ին, ժամը 15:00-ին:

Ավելի ուշ, հոկտեմբերի 31-ին, «...Վահան Խաչատրյանի հարցին այն մասին, թե արդյո՞ք իրենք են դեռ ստուգումները չսկսած «Հայոց աշխարհ» թերթին տեղեկացրել «...ԳԱԼԱ հեռուստաընկերության սեփականատիրոջ «լեվի» բիզնեսներում հայտնաբերված խախտումների եւ չարաշահումների (Հայոց աշխարհ, 31.10.2007) մասին», ՀՀ ՀՊԾ օպերատիվ հետախուզության վարչության առաջին բաժնի պետ Գագիկ Օհանյանն այդպես էլ դրական պատասխան չտվեց (31.10.2007, ԳԱԼԱ ՀԸ լուրերում այդ ամենը ցուցադրվել է, Ազատություն ՌԿ-ն այդ գրույցը հաղորդել է գրեթե ամբողջությամբ): Հոկտեմբերի 29-ին ԳԱԼԱ ՀԸ ստուգման ներկայացած օպերիվագորներն այդ օրը այդպես էլ որեւէ փաստաթուղթ չեն հասցրել ստուգել, բացակայել են հոկտեմբերի 30-ին, իսկ հոկտեմբերի 31-ին «Հայոց աշխարհ» թերթում տպագրած մի հոդվածում եւ հոկտեմբերի 25-ին նույն թերթում հրապարակված ՀՀ ՊԾ պետ Վ.Բարսեղյանի հարցազրույցով ասվում է, թե «ՉԱՊ» ՍՊԸ-ում իրականացված ստուգումների արդյունքում բացահայտվել են բազմաթիվ չարաշահումներ: Լրագրության տարրական կանոնները պիտի որ ստիպեին այդ թերթին եւ այնտեղ ստեղծագործողներին ստուգել փաստերը: Իսկ փաստն այն է, որ հարկային օպերիվագորները ԳԱԼԱ ՀԸ եւ «ՉԱՊ» ՍՊԸ-ի հաշվապահական առաջին փաստաթղթերին ծանոթացել են միայն հոկտեմբերի 31-ին, ժամը 12:30-ին: Այս ժամանակային հակասությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ փաստերը խեղաթյուրելով ԳԱԼԱ ՀԸ-ի դեմ գործ սարքելու ողորմելի հևարք: **հիմա օպերիվագորները ուղղակի դատապարտված են հարկային օրենսդրությունը խախտելու մասին գործ սարքել ԳԱԼԱ ՀԸ դեմ, այլապես իրենց պետը եւ իրենց խոսնակ թերթը ստախոս դուրս կգան...**» (Վ.Խաչատրյանի հայտարարությունից. 31.10.2007):

Ոչ ոք այդ համակարգում չի համարձակվի հակառակ գնալ պետին ու չապացուցել նրա վաղաժամ հայտարարությունը, թե օրինախախտումներ են հայտնաբերվել: Իսկ «Հայոց աշխարհ» թերթն այստեղ վերածվում է մի համեստ՝ 3500 տպաքանակով գործիքի: Շատ վատ է աշխատում, ի դեպ: Ժամանակը դեռ ոչ ոք չի կարողացել շուռ տալ, թերեւս, միայն ֆանտաստ գրողները:

Հոկտեմբերի 25-ի երեկոյան, ԳԱԼԱ-յում հարցազրույցի հյուր է եղել ՀՀԾ անդամ Արամ Մանուկյանը: Խոսվել է նաեւ ԳԱԼԱ ՀԸ նկատմամբ կիրառվող ճնշումների ու հոկտեմբերի 23-24 երեկոյան երեւանում խաղաղ, իրազեկող քայլերի մասնակիցների նկատմամբ կիրառված ճնշումների, նրանց ձերբակալության ու ազատման մասին:

Հոկտեմբերի 26. ԳԱԼԱ ՀԸ նկարահանող խումբը նկարահանել է ընդդիմության հանրահավաքը, այն լուսաբանել իր լուրերում եւ հոկտեմբերի 28-ի ամփոփիչ կիրակնօրյա թողարկման մեջ:

Հոկտեմբերի 29. ժամը 15-ի սահմաններում, վերջապես, ԳԱԼԱ ՀԸ են ներկայացել երեւանյան 3 հարկային օպերիվագորները եւ կամեցել սկսել ստուգումները: Պարզվել է, որ նրանցից մեկը չունի ՀՀ ՀՊԾ աշխատակցի վկայական: Վ.Խաչատրյանը թույլատրել է ստուգումները, պայմանով, որ Գագիկ Օհանյանը հաջորդ այցելության ժամանակ կներկայանա պատշաճ, համապատասխան վկայականով: Այդ օրը հարկային օպերիվագորները որեւէ փաստաթղթի չեն հասցրել ծանոթանալ:

Հոկտեմբերի 29-ի երեկոյան, ԳԱԼԱ-յում հարցազրույցի հյուր է եղել ՕԵԿ անդամ, ՀՀ ԱԺ պատգամավոր Հովհաննես Մարգարյանը: Խոսվել է նաեւ ԳԱԼԱ ՀԸ նկատմամբ կիրառվող ճնշումների մասին:

Հոկտեմբերի 30-ին հարկային օպերիվագորները չեն ներկայացել ստուգումները շարունակելու:

Հոկտեմբերի 30-ի երեկոյան, ԳԱԼԱ-յում հարցազրույցի հյուր է եղել ՀՀԴ անդամ Արտակ Ավետիսյանը: Խոսվել է նաեւ ԳԱԼԱ ՀԸ նկատմամբ կիրառվող ճնշումների մասին:

Հոկտեմբերի 31. կեսօրին ԳԱԼԱ ՀԸ-ում իրենց ստուգումները շարունակեցին երեւանյան հարկային օպերիվագորները, նրանց խմբապետը, ինչպես եւ հոկտեմբերի 29-ին, ՀՀ ՀՊԾ աշխատակցի վկայական չունեւ, եւ Վահան Խաչատրյանի խնդրանքով թողեց տարածքը: Վերադարձավ ժամը 17:50-ին՝ վկայականով:

Հոկտեմբերի 31. «Հայոց աշխարհ» թերթը գրեց. «...ՀՊԾ պետի գլխավորությամբ իրականացվող «քաղաքական հաշվեհարդարի» առաջին ծիծեռնակը Գյումրիի ԳԱԼԱ հեռուստաընկերության սեփականատիրոջ «լեվի» բիզնեսներում հայտնաբերված խախտումների եւ չարաշահումների նախադեպն էր: Այլախոհությունը վահան դարձրած «քաղիալաճյալների»՝ օրենքի հետ ունեցած խնդիրների քաղաքականացման սիրահարները տեղնուտեղը սույն իրողությունը շահարկեցին՝ վայնասուն բարձրացնելով, թե ազատ ժամանակ սապոնագործությամբ զբաղվող այս խիզախ

«հեռուստամագնատին» ճնշում են նախկին նախագահի մտավարժանքները տիրաժավորելու համար: Ընդամին՝ ի՞նչն է հետաքրքիր. ո՞չ ԳԱԼԱ-ի սեփականատերը, ոչ էլ առավել եւս նրա «հասարակական պաշտպանները» նույնիսկ չփորձեցին վիճարկել բուն չարաշահումների փաստը, որ հարկայինը ֆիքսել էր ավելի վաղ, քան կարկառուն նախկինը (ի նկատի ունի ԼՏՊ-ին.-Լ.Բ.) կհասցներ հայոց աշխարհը «ցնցել» իր երկրորդ հայտնությամբ (ի նկատի ունի հոկտեմբերի 26-ի ԼՏՊ ելույթը հանրահավաքում-Լ.Բ.)...» (31.10.2007, Հայոց աշխարհ, Ս.Հարությունյան, «Ինչպես է սարքվում քաղաքական հետապնդումների վարկածը»):

Այս քանդակի ամբողջ աբսուրդն այն է, որ բանասեր-ստեղծագործող Ս.Հարությունյանի կարծիքով ԳԱԼԱ-ի սեփականատերը պիտի վիճարկեր հարկային չարաշահումների փաստը: Անեկդոտ: Իսկ ու՞ր է փաստը: Ի՞նչ փաստ կարող էր լինել հոկտեմբերի 25-ին կամ հոկտեմբերի 30-ին, երբ ԳԱԼԱ ՅՇ եւ ՉԱՊ ՍՊԸ փաստաթղթերից առաջինին հարկային պաշտոնյաները ծանոթացել են... հոկտեմբերի 31-ին: **Որտե՞ղ է այդ փաստը հաստատող, կնքված ու ստորագրված հարկային փաստաթուղթը**, որ դեռ Տրոյան պաշարելու օրերից ժողովուրդը «ակտ» է կոչում: Մյուս կողմից, մի քիչ անմարդկային է, ռեժիմի խոսափող թերթում մարդիկ փաստեր ունեն ԳԱԼԱ ՅՇ հարկային չարաշահումների մասին ու մի փոքրիկ կտոր պատճեն իսկ չեն տպագրում թերթում, դա դեռ ոչինչ, չեն էլ ուղարկում ԳԱԼԱ ՅՇ սեփականատիրոջը, որ այս մարդն էլ իմանա, թե ինչ խարույկով է այրվելու, ու գուցե՝ պատասխանի: ՀՊԾ-ն ամսի 25-ին արդեն փաստեր ունի՝ հիմնված ԳԱԼԱ ՅՇ-ում իրականացված տեւական ստուգումների վրա, այն պաշտոնապես չի ներկայացրել օրինախախտին ու հոկտեմբերի 29-ին ստուգումներ է նախաձեռնում այստեղ: Տեսնես ինչու՞ չի տրամադրել, ինչու՞ է իր եզրակացությունը ստուգվողին տրամադրելուց առաջ թերթով հրապարակում: Ախր ինչպե՞ս տրամադրեր... ստուգումները հոկտեմբերի 29-ին են սկսել միայն: **Այսպես են խայտառակվում պատվիրված նյութեր սարքողները:**

Ուրեմն, ենթադրում եմ, որ սրանք այնքան են խանդավառվել ԳԱԼԱ ՅՇ-ը հարկային ստուգումներով խեղդելու պլանով, որ, երեւի, օրուգիշեր չքնելու արդյունքում կորցրել են ժամանակի գզացողությունը ու **ստուգումներն սկսելուց 3-4 օր առաջ, սկսել են հայտարարել, թե տեւական ստուգումների արդյունքում պարզվել է, որ այստեղ բազմաթիվ չարաշահումներ կան:** Առանց ամոթի, ամենաբարձր մակարդակով՝ ՀՀ ՀՊԾ պետի բերանով: Էլի ինչ-որ ապացույց պե՞տք է այն բանի, որ Հայաստանի իշխանությունները ԳԱԼԱ ՅՇ-ն փակելու լայնամասշտաբ գործողություններ է ծավալում: Այս վարքի բոլոր արձագանքներն ու քննադատությունները սրանք փորձում են ներկայացնել, թե իբր ԳԱԼԱ ՅՇ սեփականատերը քաղաքականացնում է իր տնտեսական հանցագործությունները: Բա հո հեռուստաընկերությունը չպիտի փորձեին փակել այն պաշտոնական մեկնաբանությամբ, թե չի ենթարկվում ՀՀ ԱԾԾ, ՀՊԾ, ՀՌԱՀ հրամաններին: Ծիշտ այնպես, ինչպես Սեֆիյանը, Մախասյանն ու Բաբաջանյանը քաղաքական բանտարկյալներ լինելով՝ նստած են որպես քրեական հանցագործներ, որովհետեւ այլախոհությունը քրեորեն հետապնդելի չէ մեր օրենքներով, ու նրանց զսպելու եւ ձայնագրելու եղանակը ռեժիմի պայծառ մտածողությամբ, գործի քրեականացումն էր, այդպես էլ ԳԱԼԱ ՅՇ-ը լռեցնելու քաղաքական մոլուցքի իրականացման օրինական եղանակը գտել են խնդիրը տնտեսական դաշտ տեղափոխելու մեջ: Հին ու փորձված միջոց է, ֆորպոստատիրոջից են սովորել: Լավ, դրանով կարելի է եվրոճրիակերներին խաբել, մենք հո գիտենք, թե ռեժիմն ինչ երազներ է տեսնում... երբ կարողանում է քնել:

Ի՞նչ իմանար ՀՊԾ պետ Վահրամ Բարսեղյանը, որ Շիրակի մարզպետ Լիդա Նանյանը նոյեմբերի 2-ին հատուկ ԳԱԼԱ ՅՇ խնդիրն ուսումնասիրելու համար Գյումրի այցելած լրագրողական բազմամարդ խմբին հանպատրաստից ասուլիս տալով առնվազն 3 դրվագներով աջակցելու էր հեռուստաընկերությանը: Նախ ասաց, թե իր հարկայինի պետ եղած ժամանակ հատուկ ուսումնասիրություններ չեն կատարվել ՉԱՊ ՍՊԸ-ում, որովհետեւ դրա անհրաժեշտությունը չի եղել, ըստ Լ.Նանյանի՝ նորմալ հարկատու է եղել ՍՊԸ-ն, կանոնավոր վճարել է հարկերը, ավելին՝ նա այս մասով պատասխանատվությունն ստանձնեց Գյումրու հարկայինի պետ եղած իր ժամանակաշրջանի համար: Բացի այդ Լ.Նանյանը պետական ժամանակակից պաշտոնյանին աննման բաներ էլ ասաց, ասաց, որ բազմակարծություն պիտի լինի եւ ճիշտ է անում ԳԱԼԱ ՅՇ-ն, ասաց, որ ԳԱԼԱ ՅՇ-ն իրենց էլ է քննադատել, ու դա նորմալ է: Այսպիսով այս տղամարդ կինը խայտառակ վիճակի մեջ գցեց հարկային բանասարկուներին. հիմա սրանք կամ ԳԱԼԱ ՅՇ-ի դեմ ակտ գրելու հետ Գյումրու հարկայինի նախկին պետին են նշանախ տակ առնելու, կամ մեղմացնելու են գեղանկարվելիք ակտը ու տեղական ինչ-որ հարկային պաշտոնյայի վրա ջարդելու ԳԱԼԱ ՅՇ-ի «անմարդկային օրինախախտումների» մասին վաղաժամ աղմուկը: Նույնիսկ կարելի է կռահել, թե ով է լինելու այդ անհաջողակը, բայց դա առանձին պատմություն է:

Հարցի մյուս կողմը. «Հայոց աշխարհ» թերթի բանասեր-ստեղծագործողները պատկերացնում են մի իրադրություն, երբ ԳԱԼԱ ՅՇ-ը դառնա մեկի գործիք խոսափողը «Հայոց աշխարհ» թերթի դեմ: Այո, պատկերացնում եք: Եթե այո, ուրեմն իմացեք, նման երեւակայություն ունեք դուք ու ձեր խոսնակները միայն: Ես հեռու եմ լրագրողական համերաշխությանն անվերապահ դավանելուց,

պրոբլեմների մասին պիտի խոսվի եւ գրվի, հնարավորին չափ շատ, պիտի շատ քննարկվեն ու քննադատվեն ե՛ւ հարկային չարաշահումները, ե՛ւ ճնշումները ՉԼՍ-ների վրա, դա պիտի արվի առավելագույն ազնվությամբ եւ բարեխղճությամբ, որովհետեւ անկախ այն հանգամանքից, թե ով է ռեժիմի պարագլուխը ու քանի ժամկետ է նա կառավարելու, կա գործընկերային շահ. երբ պայքարում ես մրցակից ՉԼՍ-ի լրագրողին ծեծելու դեմ, անուղղակիորեն պայքարում ես նաեւ քո ՉԼՍ շահերի համար, որովհետեւ (1) պայքարի նախադեպը կարող է կանխարգելել քո լրագրողի հավանական ծեծը, (2) ծեծվածը կարող է մի օր էլ պայքարել քո լրագրողի ծեծի դեմ, եւ անգամ՝ ֆիզիկապես, (3) ծեծվածը կարող է մի օր անցնել աշխատանքի քեզ մոտ ու խղճի խայթը չի ստիպի քեզ գետինը մտնել, դեպքը վերհիշելիս, (4) կյանքը կարող է փոխվել ու դու կարող է աշխատանքի անցնես ծեծվածի մոտ եւ նորից գետինը մտնելու մասին մտածելու առիթ չես ունենա, (5) պայքարի օրինակը կարող է քաջալերել կասկածողներին ու վախկոտներին, ... ու էլի մի տասը հիմնավորում: Լավ, որ ձեզ ԳԱԼԱ ՅԸ-ի դեմ այդպիսի «սենսացիոն կյութ» են դեմ տալիս, բոլորովի՞ն մտքներովդ չի անցնում տարածելուց առաջ գոնե փաստերը ստուգել: Եթե ոչ, ուրեմն «Յայոց աշխարհ» թերթը կամ կիլոմետրերով հեռու է լրագրողական բարոյականության տարրական կանոններից, կամ, ավելի վատ, դուք, իրականում, չկաք, ձեր փոխարեն մոգոնում են ձեր խոսնակները: Փոխանցեք այս հոդվածը ձեր թելադրության դասատուին եւ Աստված ձեզ՝ դատավոր:

Վերջում: Աշխարհը, մեր աշխարհը, իսկական հայոց աշխարհը, Զոչարյան Ռոբերտով, Լեւոն Տեր-Պետրոսյանով, Սարգսյան Սերժով, Վազգեն Մանուկյանով, Ամալյան Գրիգորով, Ա1+-ով, ԳԱԼԱ-յով, Շանթով, Ցայգով, գաղթած ու չգաղթած քաղաքացիներով չի սկսվում ու, մանավանդ, չի էլ ավարտվում: Կյանքը թատրոն լինելուց առաջ պայքար է: Թատրոնի ու պայքարի ամբողջ խառնաշփոթի մեջ մարդիկ մշտապես դատապարտված են կողմնորոշվել: Յավաստիացնում եմ, մեր քաղաքում ու Յայաստանում բավականաչափ թվով մարդիկ կողմնորոշվել են արժանապատվության օգտին. անհրաժեշտության դեպքում կլինի այնքան մարդ, որ հավաքի այնքան գումար, որ կբավի հարկայինի նկարելիք գումարը փակելու, ԳԱԼԱ ՅԸ-ը վերագինելու եւ այն ապագայում էլ պաշտպանելու համար: Առանց զգացմունքայնության: Այս բարձունքը հանձնող չկա: